

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» հոկտեմբերի 2015թ.

N --- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՐԻԿ ՍՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Արաբկիր 43-րդ փողոցն անվանակոչել հայ երգի երախտավոր Հայրիկ Սուրադյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅՐԻԿ ՍՈՒՐԱԴՑԱՆԻ ԱՆՎԱՍԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հայ երգի երախտավոր Հայրիկ Մուրադյանը ծնվել է **1905թ.** մայիսի **3-ին** Վանի նահանգի Շատախի շրջանի Ջնուկ գյուղում: Վանում եղած տարիներին սովորել է Վանի դպրոցում:

1921թ. տեղափոխվել են Հայաստան և բնակություն հաստատում Վերին Արտաշատում:

Սկզբում պատանին աշխատել է որպես բատրակ: Միաժամանակ ավարտել է միջնակարգ դպրոցը, ապա և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

Հայրենական պատերազմի տարիներին Հայրիկ Մուրադյանը մեկնել է ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի շքանշանով», «Պատվո նշանով» և երեք մարտական մեդալներով: Հայրիկ Մուրադյանը մասնագիտությամբ եղել է պատմաբան և շատ արժեքավոր աշխատությունների հեղինակ: Սակայն առավել հայտնի է դարձել՝ որպես հին հայկական ժողովրդական երգերի կատարող: Ձայնագրվել է Հայաստանի Ազգային ռադիոյում: Բազմաթիվ հայկական հայտնի ֆիլմերում հնչել է նրա ձայնը:

Հայրիկ Մուրադյանի և իր դուստր Մարոյի ջանքերով **1980թ.** հիմնադրվել է «Ակունք» ազգագրական համույթը (Ռադիոյի և հեռուստատեսության Պետական կոմիտե), որը հետագայում մեծ ճանաչում ստացավ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս և «Վան» ազգագրական համույթը (Պոլիտեխնիկական ինստիտուտ): Նա եղել է «Ակունք» ազգագրական համույթի ոգեշնչողն ու խորհրդատուն, որը հետագայում գլխավորել է նրա դուստրը՝ Մարո Մուրադյանը: Ստեղծել և գլխավորել է բազմաթիվ ազգագրական ուսանողական և մանկական համույթներ, որոնցից ամենահայտնին «Հայրիկ Մուրադյան ազգագրական երգի ու պարի համույթն» է եղել: Հայրիկ Մուրադյանի կատարած ժողովրդական երգերը հուզական յուրահատուկ գունավորում են տվել «Հայֆիլմի» նկարահանած «Երգ Հայրենի» (**1972**), «Պետրոս Դուրյան» (**1973**), «Վասպուրականի պարեր» (**1973**) վավերագրական ֆիլմերին: Նրա կատարման ձայնագրություններով է ձևավորվել Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի՝ Վիլյամ Մարոյանի «Խաղողի այգին» ներկայացումը (**1971**): Նրա երգած երգերից երկուսը տեղ են գտել Փարիզում (**1971**) լույս տեսած «Աշխարհի ժողովուրդների ֆոլկլորը» ծրագրված շարքի չորս ձայնակավառակներից առաջինում՝ Հայաստան բաժնում: Մուրադյանը ձայնագրվել է շուրջ **200** երգ՝ ՀՀ ազգային ռադիոյի ձայնադարանում, «Հայրենի երգեր» ժողովածուում (**1980**) և այլն:

Հայրիկ Մուրադյանը մահացել է **1999թ.** դեկտեմբերի **23-ին** Երևանում:

Հայ երգի երախտավոր Հայրիկ Մուրադյանի անվամբ Երևան քաղաքում փողոց անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հայրիկ Մուրադյան» մշակութային հասարակական կազմակերպության նախագահ Ն. Դելլայանի կողմից: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **12-րդ** հոդվածի **1-ին** մասի **23-րդ** կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության **2005** թվականի դեկտեմբերի **29-ի** N **2387-Ն** որոշմամբ հաստատված կարգի **4-րդ** կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱՊՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայրիկ Մուրադյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱՊՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայրիկ Մուրադյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ